

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2018

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱՏ 6

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1

Ո՞ր շարքում ուղղագրական սխալ *չկա*:

- 1) ամանորյա, առնչվել, ընդամենը, ակնակապիճ
- 2) քսուք, դաստիրակ, ճմռթել, գաղտագողի
- 3) ինչևիցե, զոմեշ, այժմեական, բարվոքել
- 4) պարզև, պանդուխտ, հեքիաթասաժ, դշխուհի

2

Ո՞ր շարքի բոլոր բառերն են դասավորված այբբենական կարգով:

- 1) ընտանի, ընթերցել, ընկճվել, ընչաքաղց
- 2) մանուշակ, մսագործ, մկրտություն, միայնակ
- 3) սարյակ, սրբազան, սրբիչ, սեղանատուն
- 4) ակնհայտ, աշակերտ, ապականել, արնանման

3

Ո՞ր շարքի բոլոր բառերի և բառաձևերի վերջին վանկն է շեշտվում:

- 1) չորրորդ, գլուխ տալ, գիտակցորեն, եվրոպական
- 2) սովորություն, պատանիները, վազեվազ, լայնատերև
- 3) գիսաստղեր, Հովհաննես, երկրորդ, հոլանդական
- 4) թռչուն, գետակ, լիտր, բուրմունք

4

Ո՞ր բառում է գաղտնավանկի *ը*-ն սխալ տեղադրված:

- 1) ձեռ(**ը**)նբաց
- 2) գտ(**ը**)նվել
- 3) լուս(**ը**)նկա
- 4) խ(**ը**)նդրանք

5

Ո՞ր շարքի բոլոր բառերն են իրար հոմանիշ:

- 1) մարտիրոս, զոհ, հոսպիտ, նահատակ
- 2) շողոքորթ, երեսպաշտ, շողոմ, գրգամոլ
- 3) եղծել, աղավաղել, խեղաթյուրել, նենգափոխել
- 4) սատար, զորավիգ, կորովի, ապավեն

6

Ո՞ր բառում *-ուկ* ածանց *չկա*:

- 1) բանուկ
- 2) փափուկ
- 3) նորելուկ
- 4) հանելուկ

7

Ո՞ր բառի բառակազմական վերլուծության մեջ սխալ կա:

- 1) միջնապատ – *միջին, պատ*՝ արմատներ, *ա*՝ հոդակապ
- 2) ճամփաբաժան – *ճամփա, բաժ*՝ արմատներ, *ան*՝ վերջածանց
- 3) հրագանգուր – *հուր, գանգուր*՝ արմատներ, *ա*՝ հոդակապ
- 4) մոխրագույն – *մոխիր, գույն*՝ արմատներ, *ա*՝ հոդակապ

8

Ընդգծվածներից ո՞րն է մյուս երեքին համանուն:

- 1) **Անարգել** կարող էր բացել ցանկացած փակ դուռ:
- 2) Ձին **անարգել** թռավ վերջին ձողապատների վրայով:
- 3) Իշխանին **անարգել** ու անցնել անպատիժ նա չէր կարող:
- 4) Անցել էինք ամրոցի բլուր պահակակետերն **անարգել**:

9

Ո՞ր նախադասության մեջ ենթակայական դերբայ կա:

- 1) Հրավիրեցին բոլորին՝ դերասանների, լրագրողների, պաշտոնաթող զեներալների, իսկ իրեն մոռացան:
- 2) Առանց Թորիկի հետ խորհրդակցելու՝ նա մտավ մսագործ Ասատուրի, պատշար Օղասաբի, հացագործ Սիմոնի տները և բոլորից էլ մերժողական պատասխան ստացավ:
- 3) Գրիգոր Նարեկացու մասին պատմող ամենահավաստի աղբյուրները նրա երկերի հիշատակարաններն են:
- 4) Ճախարակի պես երգ մանելով, հետո աղմուկ թափելով՝ հռնդաց, անցավ շողերի մեջ սպիտակ ինքնաթիռը:

10

Ո՞ր շարքի բոլոր բայերն են դրված ենթադրական եղանակով:

- 1) կշտամբեց, կայրի, կուղարկի, չի ուղղի
- 2) կուտեմ, չեմ սուզվի, կաշխատենք, ջանա
- 3) կապրենք, կուտակենք, կտեսնի, կուշանա
- 4) կգաս, չի աղոթի, կամայանա, կընկերանային

11

Ո՞ր նախադասության մեջ շաղկապ կա:

- 1) Չնայած սառնամանիքին՝ մրցումները չէին դադարել:
- 2) Հենց այդ գյուղն է մեր որոնածը:
- 3) Այնպես էին խառնել ամեն ինչ՝ սատանան իսկ գլուխ չէր հանի:
- 4) Հենց գարունը բացվի, կտեղափոխվենք:

12

Ո՞ր նախադասության մեջ թվական կա:

- 1) Ուսուցչուհին հրահանգեց, որ երկրորդ շարքը պիտի վազի մինչև աղբյուր:
- 2) Մեզ համարներ տվեցին ու խմբերի բաժանեցին. գույգ թվակիրները մի քանի քայլ առաջ եկան:
- 3) Ինձ խմբի ավագ նշանակեցին, ու ես տեսա, որ թեկուզ փոքրիկ, թեկուզ յոթնոգանոց խմբի գլուխ կանգնելն ինձ դուր է գալիս:
- 4) Դասարանների միջև անցկացվող մրցությունն ավարտվեց, և նրանք՝ և՛ պարտված ութերորդիները, և՛ հաղթած յոթերորդիները, բարձր աղաղակեցին:

13

Ո՞ր շարքի բոլոր բառերն են ածականներ:

- 1) երկարատև, դուրեկան, հոգեպարար, աղմկոտ
- 2) մարդախույս, զարմացած, միակ, պարզունակ
- 3) զվարթ, առատաձեռն, ժպտուն, ներքուստ
- 4) հպարտ, լրջորեն, ջինջ, թափանցիկ

14

Ո՞ր տարբերակում է ենթակայի արտահայտությունը սխալ նշված:

- 1) Ի՞նչ անեմ ես՝
Մոլորյալս՝ խեղճ ու կրակ,
Իրար բերեմ բևեռները իմ հակառակ,
Մեկմեկու հետ հաշտեցնեմ: *(ածական)*
- 2) Աշխարհում այս աղոտ ես քնքուշ
Մի հեքիաթ հյուսեցի քո մասին: *(դերանուն)*
- 3) Իմ տխուր հոգում ծագում է ոսկի
Ճաճանչը հուստ հարատև կյանքի: *(զոյական)*
- 4) Պատիվդ պահող չկա,
Մասրենի՛, սարի՛ մասրենի: *(դերբայ)*

15

Ո՞ր նախադասության մեջ բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Որոտում է ձորն ի վար
Հոսում է ինքը ինքը
Նորին մեծություն փլված երկինքը:
- 2) Ես նրանից հուր եմ ուզում
Անշեջ հուրը սրբազան:
- 3) Մեր առջև բացվեց մի հրաշք տեսարան բիրլիական լեռն էր:
- 4) Նրա ահեղագոչ ձայնը անցավ որպես փոթորիկ այդ երկրի մի սահմանից մինչև մյուս սահմանները:

16

Նախադասության ի՞նչ անդամ է դերբայական դարձվածը:


Սևադա իշխանը ուրախանում էր իր դասեր բոլոր իղձերը կատարելով:

- 1) ներգործող խնդիր
- 2) ձևի պարագա
- 3) ստորոգելի
- 4) միջոցի խնդիր

17

Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:

Օրերի մշուշից մոտենում է ինձ չորախ Եգորը, ելնում է, ինչպես մեր ժայռերը՝ սպիտակ մառախուղի միջից, և ես տեսնում եմ նրա ցեխոտ մեջքը և կավի նման մաշկը, որ դեղնել էր քարանձավի խոնավությունից:



18

Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ:

-Սմբատ, դու պետք է ներողություն խնդրես ինձնից քո անվայելուչ արարքի համար,- ասացի ես:

- 1) Ես ասացի, որ Սմբատը թող ներողություն խնդրի ինձնից իր անվայելուչ արարքի համար:
- 2) Ես ասացի Սմբատին, որ նա պետք է ներողություն խնդրի ինձնից նրա անվայելուչ արարքի համար:
- 3) Ես ասացի, որ Սմբատը պետք է ներողություն խնդրի նրանից իր անվայելուչ արարքի համար:
- 4) Ես ասացի Սմբատին, որ ինքը պետք է ներողություն խնդրի ինձնից իր անվայելուչ արարքի համար:

19

Ո՞ր տարբերակում ընդգծվածը նախադասության անդամ չէ:

- 1) **Ինչ** էր պատահել՝ այդպես էլ չիմացանք:
- 2) Դուք, **կարծում եմ**, չարաչար սխալվում եք:
- 3) Նա չզգաց՝ **երբ** անցավ ժամանակը:
- 4) **Սեղանի վրա** դրված մոմը վերջին ցուրերն էր արձակում:

20

Ո՞ր նախադասության մեջ ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Հայրը երբ էր հնձել լանջի այդ խոտհարքը տղան չէր կարողանում հիշել:
- 2) Այդ ամենի հողածածկ կտուրներով տների ու գյուղական խորդուբորդ ճամփաների կարոտն էր զգում մշտապես:
- 3) Պատերազմը նոր էր վերջացել կամ դեռ չէր վերջացել հոր հագին բանակային շինել էր:
- 4) Գերանը չկոտրվեց կացնով ուժգին հարվածելուց հետո և սողոցով կտրեց:

21

Ո՞ր նախադասությունն է արևմտահայերենով:

- 1) Էն լեզվներումը նրանք կարդում էին երևելի մարդկանց գործերքը, նրանց արածներն ու ասածները:
- 2) Մեծ պատահարները զիս անտարբեր կը թողուն, բայց մանր դեպքերը՝ չնչին ուրիշների աչքին, լուրջ խորհրդածություններու նյութ են ինձի:
- 3) Եթե հույս ունինք ապագայի վերա, նորա երևցուցիչը դուք եք, ձեզանից կախվում է ազգի ապագան, և ձեր վերա է միակ հույսը:
- 4) Եվ շա՛տ ցավեցոյց զմէջք փափուկ օրիորդին՝ Արագ հասուցանելով ի բանակն իւր:

22

Սայաթ-Նովայի ո՞ր բանաստեղծությունից է տրված հատվածը:

*Չըտեսայ քու դիդարի պէս՝ դուն դիփունէն բաշ, նազա՛նի,
Թէ խամ հաքնիս, թէ զար հաքնիս, կու շինիս դումաշ, նազա՛նի,
Էնդու համա քու տեսնողըն ասում է վա՛շ, վա՛շ, նազա՛նի:*

- 1) «Աշխարումս ա՛խ չիմ քաշի»
- 2) «Թամամ աշխար պըտուտ էկա»
- 3) «Աշխարս մե փանջարա է»
- 4) «Դուն է՛ն գըլխեն իմաստուն իս»

23

Հատվածներից որը Պ. Դուրյանի ո՞ր բանաստեղծությունից է:

- | | |
|--|---------------|
| ա. Ո՛հ, խուրճ մը վարս, եղեմ մը շունչ,
Շրջագգեստ մը շրշեց իմ շուրջ: | 1. «Տրտունջք» |
| բ. Այլ, ո՛հ, ի՞նչ կ'ըսեմ... շանթահարե՛ գիս,
Աստվա՛ծ, խոկն հըսկա փշրե՛ հյուլեիս... | 2. «Իմ ցավը» |
| գ. Շատերը զիս մերժեցին.
«Քընար մ'ունի սուկ», -ըսին: | 3. «Սիրել» |
| դ. Հեք մարդկության մեկ ոստը գոս
Հայրենիք մը ունիմ թըշվառ... | 4. «Լճակ» |

- 1) ա-2, բ-3, գ-4, դ-1
- 2) ա-4, բ-2, գ-1, դ-3
- 3) ա-3, բ-2, գ-4, դ-1
- 4) ա-3, բ-1, գ-4, դ-2

24

Ո՞ր պնդումն է սխալ Բաֆֆու «Մամվել» վեպի վերաբերյալ:

- 1) Վեպի պատերազմական դրվագում Սամվելը շտապում է հասնել հոր վրանը, որպեսզի վրեժով լցված լեռնականները չպղծեն հոր դիակը, պատառ-պատառ չանեն ու ռազմի դաշտով ցրիվ չտան:
- 2) Վեպում գրողը փորձել է վերստեղծել 4-րդ դարի քաղաքական անցքերի կենդանի պատկերը:
- 3) Մերուժան Արծրունին գլխավոր կերպարներից մեկն է, ազգուրաց դավաճան, որի ճակատագիրը վեպում մնում է անորոշ:
- 4) Վեպն սկսվում է Արարատյան դաշտի առավոտի նկարագրությամբ:

25

Նար-Դոսի «Ես և նա» պատմվածքի «Ես»-ի անանուն հերոսը նշվածներից իտալական ո՞ր վերնագրով սիրավեպն է թարգմանաբար ներկայացնում ընթերցողին՝ այն վերանվանելով «Նա»:

- 1) «Ծնրադրում»
- 2) «Հատուցում»
- 3) «Վրեժ»
- 4) «Ձղջում»

26

Հ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի նախերգանքի երկտողերի ո՞ր հերթականությունն է ճիշտ արտահայտում այդ երկտողերի հաջորդականությունը:

- | | |
|--------------------------------|---------------------------------|
| 1. Որդիդ լինի, թե հերն ու մեր, | 3. Չարն էլ է միշտ ապրում անմեռ, |
| Թե մուրագով սիրած կին | Անե՛ծք նըրա չար գործին |
| 2. Գործն է անմահ, լավ իմացեք, | 4. Երնե՛կ նըրան, որ իր գործով |
| Որ խոսվում է դարեդար | Կապրի անվերջ, անդադար |

- 1) 4, 2, 1, 3
- 2) 1, 3, 2, 4
- 3) 2, 4, 3, 1
- 4) 2, 3, 4, 1

27

Ա. Բակունցի ո՞ր պատմվածքն է սկսվում հետևյալ հատվածով:

«Աշուն էր, պայծառ աշուն...»

Օդը մաքուր էր, արցունքի պես ջինջ: Կապտավուն սարերն այնքան մոտ, այնքան պարզ էին երևում, որ հեռվից կարելի էր համարել նրանց մաքուր լանջերի բոլոր ձորակները, կարմրին տվող մասրենու թփերը»:

- 1) «Սպիտակ ձին»
- 2) «Խոնարի աղջիկը»
- 3) «Միրհավ»
- 4) «Ալպիական մանուշակ»

Պ. Սևակի ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

*Նրանց ծնունդը միշտ էլ թվում է անսպասելի
Եվ հետո մարդկանց դարեր շարունակ զարմանք պատճառում,
Բայց Նրանք կյանքում միշտ էլ ծնվում են լույ այն պատճառով,
Որ անչափ շատ են սպասել Նրանց:*

- 1) «Եվ այր մի՛ Մաշտոց անուն»
- 2) «Մարդ էլ կա, մարդ էլ»
- 3) «Առաջադրանք համայն աշխարհի հաշվիչ մեքենաներին և ճշգրիտ սարքերին»
- 4) «Վարք մեծաց»

Ո՞ր խոսքը Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկանները» վեպի որ հերոսինն է:

- | | |
|---|---|
| <ol style="list-style-type: none"> 1. «Արդարև, մայրաքաղաքս ինքզինքը բախտավոր համարելու է ձեզ պես պատվական ազգայինի մը... Հայրենասեր անձ մը... Ազգասեր, ուսյալ, կրթյալ... Ազնվասիրտ, ազնվախոհ, ազնվադեմ մեկ մը իր մեջ ունենալու համար»: 2. «Ես ինքզինքս չէի կարծեր այնչափ մեծ մարդ, որչափ որ կկարծե այս խմբագիրն, բայց հարկավ ան ինձմե ադեկ գիտե իմ որչափ մեծ ըլլալս, վասնզի խմբագիր մ'է և ուսումնական է...»: 3. «Կար ժամանակ մը, ուր խավարը լուստ դեմ կը կռվեր, տգիտությունը գիտության դեմ, անցյալն ապառնիին դեմ, հրամայականը սահմանականին դեմ, սուրը գրիչի դեմ, ատելությունը սիրո դեմ, կրակը ջուրին դեմ, միսը բանջարեղենին դեմ...»: 4. «...Թաղականին գործն ալ այսօր լմնցուցինք. կիրակի օրը քվեարկությունը պիտի կատարվի, և բոլոր անդամները պատվավոր մարդիկ պիտի ըլլան»: | <ol style="list-style-type: none"> ա. խմբագիր բ. բանաստեղծ գ. Մանուկ աղա դ. Աբխողոմ աղա |
|---|---|

- 1) 1-ա, 2-գ, 3-բ, 4-դ
- 2) 1-դ, 2-բ, 3-գ, 4-ա
- 3) 1-գ, 2-ա, 3-դ, 4-բ
- 4) 1-ա, 2-դ, 3-բ, 4-գ

Ինչպե՞ս է Գ. Չոփրապի «Չաբուղոն» նորավեպի նույնանուն հերոսը բանտ ընկնում:

- 1) Կռվի է բռնվում ոստիկանության հետ:
- 2) Նրան մատնում է իր սիրած աղջիկը:
- 3) Բռնվում է մեծ գողության մեջ:
- 4) Սպանում է սիրած աղջկա հետ կապված տղային:

31

Ո՞ր պնդումը ճիշտ չէ Ե. Չարենցի «Ամբոխները խելագարված» պոեմի վերաբերյալ:

- 1) Քնարական պոեմ է, որի միակ հերոսը բանաստեղծն է:
- 2) Պոեմն սկսվում է նախերգանք-ուղերձով, որը հղվում է ողջակիզվող հոգիներին:
- 3) Պոեմում հանդես է գալիս պայքարող ժողովուրդը, իսկ որպես խորհրդանիշներ՝ հինը մարմնավորող քաղաքը, երգը, մայրամուտը, արևը:
- 4) Պատկերված է երկաթուղային կայարանը՝ որպես հին աշխարհի խորհրդանիշներից մեկը:

32

Ո՞ր շարքի ստեղծագործություններից ոչ մեկի հեղինակը Հ. Մաթևոսյանը չէ:

- 1) «Աշնան արև», «Տոհմի կանչը», «Թագադրում»
- 2) «Մթնածոք», «Ծիրանի փողը», «Կանաչ դաշտը»
- 3) «Իմ սիրտը լեռներում է», «Ծաղկած փշալարեր», «Քարափը»
- 4) «Ավելորդը», «Նարինջ գամբիկը», «Սպիտակ ձին»

33

Քառերից քանիստ՞ում է(ե) ձայնավորի հնչյունափոխություն կա.

ինքը, իրական, իմանալ, իջևան, իհարկե, իշիաս:

34

Քառերից քանիսի՞տ արմատին կարող է միանալ *-ակ* վերջածանցը և բառ կազմել առանց երկրորդ ածանցի.

աղավնի, վեճ, լեզվաբան, ինչքան, մահ, ձնագունդ, ազդ, ավագ, հաջող, հեծելագունդ:

35

Տրված գոյականներից քանիսի՞տ հոգնակին է սխալ կազմված.

հողմացույցներ, քարհանքեր, քվեաթերթեր, կեռագծեր, օրհներգներ, մրցավարեր, լուսանցքեր, մրջնակերներ, փորձագետներ, օրենսգրքեր:

36

Տրված հատվածում քանի՞տ որոշիչ կա:

Երբ հոռոմների դեսպանը հաջորդ օրը Սուրմառի ժամանեց, ասես ոչինչ էլ չէր եղել՝ ո՛չ Անին նվաճելու եկած բյուր բանակը, ո՛չ ահեղ ճակատամարտը, ո՛չ իրենց միակ կյանքը Ախուրյանի ջրերում թաղած հազարավոր զոհերը:

37

Քանի՞տ կետադրական սխալ կա հետևյալ նախադասության մեջ:

Հինավուրց եկեղեցու կորնթարդ գմբեթը խարխավել էր հիսուն-վաթսուն տարի առաջ, բայց ամբողջովին չէր ավերվել. մինչև օրս կանգուն է գմբեթի կեսը և հիմա էլ վերև բարձրացող անմիտ հետաքրքրասերներից շատերը, չըմբռնելով այդ պատմական հուշարձանի կարևորությունը, իրենց անուններն են փորագրում գավթի՝ դեռևս կանգուն մնացած պատերին:

38

Պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածվել.

մակդիր, հանգավորում, անձնավորում, շրջադասություն, համեմատություն:

Քո քաղցր վիշտը, սի՛րտ իմ մենավոր,
Քո վիշտն է փռված անհուն աշխարհում,
Քո սերն է վառված և՛ պայծառ, և՛ խոր,
Քո խենթ կարոտն է ամեն տեղ լռում:

39

Նշել այն բառերի համարները, որոնք գրվում են միասին.

1. մի(քանի), 2. փորձ(անել), 3. ի(ծնե), 4. ավանդա(գրույց), 5. բազմա(համակազմ), 6. ինչ(որ)է, 7. արտա(սահման), 8. բնակ(մակերես), 9. Տեր(Հարությունյան):

40

Նշել այն համարները, որոնց դիմաց գրված դարձվածքներն իրար հոմանիշ են:

1. երեսից կախվել-ուտքերն ընկնել
2. ջուրը չտեսած՝ բորիկանալ-հարսի տանը հարսանիք է, փեսի տանը հեշ խաբար էլ չեն
3. դեմքը կորցնել-դիմակը պատռել
4. օձիքը բռնել-բկին չոքել

41

Նշել այն նախադասությունների համարները, որոնցում մեկից ավելի ածանցավոր բայ կա:

- | | |
|--|---|
| 1. Եվ ես արթնացա խնդության ցավից.
Գիշերվա հովն էր լալիս դաշտերում,
Մութ հեռաստանն էր դժկամ նայում ինձ,
Մենակությունն էր քարի պես լռում: | 4. Թովիչ քնքշությամբ հանգչող աշխարհում
Երեկոն վառեց լույսեր դժգունակ.
Մութը հյուսում է տրամության ժանյակ...
5. Ծաղիկներն անուշ բույր են բուրվառում,
Մեռած լուսնյակը՝ մենակ ու աղոտ,
Սփռում է շուրջը իր շողերը ցուրտ,
Հավետ լռում է մի տխուր խորհուրդ: |
| 2. Մի՛ բազմապատկիր ցավն իմ հեծության
Եվ մի՛ խոցոտիր վիրավորվածիս: | |
| 3. Քնկոտ առվին թեքվեց ուռին,
Աստղերը ելան ցիրուցան... | |

42

Նշել մակբայների համարները.

1. եռյակ, 2. հավետ, 3. հաճախակի, 4. բացեիբաց, 5. հազիվհազ, 6. խստիվ,
7. մոտակա, 8. օր օրի, 9. այսպես:

43

Նշել այն բարդ նախադասությունների համարները, որոնցում ուղիղ խնդիր ստորադաս նախադասություն կա:

1. Ջգացի, որ երկրաշարժ չէ, այլ մի ուրիշ աղետ:
2. Մենք չենք հանդուրժում, երբ մեզ մոլորեցնում են հարազատ մարդիկ:
3. Հերոսները նրանք են, ովքեր կարողանում են արհամարիել մահը:
4. Մեզ ավելի հաճելի են նրանք, ովքեր պաշտպանում են մեզ ոչ իրենց շահի համար:
5. Ինչ որ կատարվում է երկրի վրա, Աստծու կամքով է կատարվում:

44

Նշել այն գրողների համարները, որոնք գրել են դրամատիկական երկեր.

1. Ա. Բակունց, 2. Մ. Մեծարենց, 3. Լ. Շանթ, 4. Ալ. Շիրվանզադե, 5. Ավ. Իսահակյան,
6. Պ. Դուրյան, 7. Բաֆֆի, 8. Ն. Ջարյան, 9. Հ. Սահյան:

45

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր *ճիշտ է, Միայլ է, Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:

1. Գրաբարյան *Ն* վերջնահինչյունը բառակազմական դեր չի կատարում. այն վերականգնվում է միայն հոգնակի կազմելիս:
2. *Հաշվեգետ, ծաղկեփունջ* բառերը անհոդակապ բարդություններ են:
3. Ածանցները փոխում են բառի իմաստը և նոր բառ կազմում, վերջավորությունները՝ նույնպես:
4. Հայերենում կան *ան, ի* նախածանցներ, ինչպես նաև *ան, ի* վերջածանցներ:
5. Ե՛վ բարդ, և՛ ածանցավոր բառերի կազմում կարող են լինել անկախ գործածություն չունեցող արմատներ:
6. *Փայտամած, կասկած, տխրամած, հանգած* բառերում *ած*-ը վերջածանց է:

Բ մակարդակ

46 Ո՞ր շարքի բոլոր բառերում կրկնակ բաղաձայն կա:

- 1) երե-րբիչ, Վիե-ա, տա-ական, չո-որդ
- 2) բե-ի, խճու-ի, ու-ածիգ, միատա-
- 3) խորաք-ին, հո-երգություն, անդո-, ա-վաճ
- 4) ու-եգություն, սովա-ուկ, մ-կածուփ, այ-ենարան

47 Ո՞ր շարքում հատուկ անվան գրության սխալ կա:

- 1) Ադիս Աբեբա, Ռեչ Պոսպոլիտա, Սանտա Կրուզ, Սասանյան Պարսկաստան
- 2) Սան Ստեֆանո, Իսրայել Օրի, Լևոն Մեծ, Արիստակես Լաստիվերոցի
- 3) Գալլ Վահան, Արմեն Լյուբեն, Սաուդյան Արաբիա, Սեյշելյան Կղզիների Հանրապետություն
- 4) Սան Մարինո, Բլեզ Պասկալ, Սիամի Ծոց, երևանյան գիշերներ

48 Ո՞ր շարքի բոլոր բառերում գաղտնավանկ կա:

- 1) գռեհիկ, անմխիթար, անշրջահայաց, անմատչելի
- 2) գրքասեր, ոտնահարել, զվարճանալ, ձեռնբաց
- 3) չնչին, հակադրվել, կրթություն, կրնկակոխ
- 4) կռփամարտ, դասընկեր, գրախոս, գրավ

49 Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:

- 1) Լուսնի մահիճը դժգույն լուսավորում էր ծուռումուռ արահետը:
- 2) Դու ինձ հրավիրեցիր քեզ մոտ իբրև հյուրի և քո ասպնջականությունը խաբեությամբ պսակեցիր:
- 3) Զբոսաշրջիկները իրենց ապշած հայացքները հառել էին դեմ դիմաց հառնող երկնաքերներին:
- 4) Ավանդույթի համաձայն՝ Թիֆլիսում ամեն տարի տոնվում է *Վարդատոն* կոչված սայաթնովյան հանդեսը:

50 Ո՞ր շարքում բառի սխալ բացատրություն կա:

- 1) *ախտալուկ* – հիվանդությունից տանջված, *խավարտ* – շատ մութ
- 2) *հողաթափ* – տնային բաց ոտնաման, *պարմանուհի* – երիտասարդ աղջիկ
- 3) *հովատակ* – արու ձի, *ակրատ* – թեթև նախաճաշ
- 4) *հոպոպ* – երկար կեռ կտուցով թռչուն, *դժոխալուր* – լսելու համար անախորժ

51

Ո՞ր շարքի բոլոր բառերն են հոդակապով:

- 1) ձերբակալել, կառավարել, անասուն, փափկասուն
- 2) շողավարդ, շողարձակ, շնորհաշատ, շուշանաթույր
- 3) մանածաթել, մայրապետ, միամիտ, մինուճար
- 4) նորափթիթ, առանձնապես, շեշտակիր, ականանետ

52

Ո՞ր շարքի բոլոր բառերն են վերջածանցավոր:

- 1) մրցակից, գնդակ, սփռոց, կառույց
- 2) կանուխ, աղերսագին, թավուտ, վերջին
- 3) արգելակ, կոճակ, ալյակ, պատանեկան
- 4) լայնակի, հայրենի, հոսանք, մարդատար

53

Ո՞ր շարքի բոլոր բառերն են դերանուններ:

- 1) ով, նույնպիսի, ոչինչ, բազմիցս
- 2) այսինչ, մի քանի, մեկը, քառորդ
- 3) ինչու, ոչ ոք, որպեսզի, մյուս
- 4) որպիսի, սույն, ողջ, ոմն

54

Ո՞ր նախադասության մեջ անկանոն բայ չկա:

- 1) Որպես լեռն է մեր պայծառ տեսել հազար ձյուն,
Այնպես նոր չեն մեզ համար դավ ու դառնություն:
- 2) Աչքս դիպավ աչքի բոցին,
Ու գլուխս կախեցի...
- 3) Փողոցներն ահա դադար են առնում,
Ննջում են խաղաղ խրճիթ ու պալատ:
- 4) Ես չգիտեմ՝ ուր են տանում հեռավոր
Ուղիների ժապավեններն անհամար:

55

Ո՞ր տարբերակում բաղադրյալ ժամանակաձև կա:

- 1) Եվ վերելքդ թող լինի դժվար,
Թող գագաթը քեզ անհաս թվա...
- 2) Ի՛նչ քաղցր է նստել այստեղ,
Ժպտալ քո խոսքին սեթևեթ...
- 3) Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ,
Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ...
- 4) Քիչ հետո արդեն նա իրեն կզգա հայի որբ մանչուկ.
Կուզենա կանչել,
Բայց ձայն չի ելնի...

56

Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ չկա:

- 1) Նա հանեց ծիրանի փողը, որով նվագել էր կապույտ լեռների երգը:
- 2) Այս հանգամանքը վիատեցրեց վերջին դիմադրողներին:
- 3) Հեռվում երևացին մշուշված սարերը:
- 4) Հագրոն առավ իր կնոջն ու աղջկան, անցավ լեռից լեռ, քարանձավից քարանձավ:

57

Ո՞ր նախադասությունն է անենթակա:

- 1) Ահա մեծ քաղաքի լքված ծայրամասերից մեկի թաղը:
- 2) Երկու օր շարունակ անձրևում է:
- 3) Ապրե՛լ, ապրե՛լ, այնպե՛ս ապրել,
Որ սուրբ հողդ երբեք չզգա քո ավելորդ ծանրությունը:
- 4) Մուրաբայի վարդը իր ցողունից առանձնացվում է թարմ վիճակում:

58

Նախադասության անդամների շարահյուսական վերլուծության ո՞ր տարբերակն է ճիշտ:

Առավոտյան երբեմն արծաթագոծ սանրը հանում էր, դիտում իրեն ոտքից գլուխ:

1. երբեմն (ա. որոշիչ, բ. ժամանակի պարագա, գ. պարագայական բացահայտիչ)
2. հանում էր (ա. պարզ ստորոգյալ, բ. բաղադրյալ ստորոգյալ, գ. ստորոգելի)
3. իրեն (ա. հատկացուցիչ, բ. հանգման խնդիր, գ. ուղիղ խնդիր)
4. սանրը (ա. ուղիղ խնդիր, բ. ենթակա, գ. ստորոգելի)

- 1) 1-բ, 2-ա, 3-ա, 4-բ
- 2) 1-բ, 2-ա, 3-գ, 4-ա
- 3) 1-ա, 2-գ, 3-ա, 4-բ
- 4) 1-գ, 2-բ, 3-բ, 4-գ

59

Ո՞ր նախադասության մեջ է պարագան արտահայտված գոյականով:

- 1) Հետո նրանք իմացան միմյանց անուններն ու մտերմացան:
- 2) Անսահման սիրում է իր ծնողներին:
- 3) Ու դժժում է աղմուկը խուլ գիշերային կայարանում...
- 4) Եթե ուզեն, արեգակներ կշարտեն երկինքն ի վեր...

60

Ո՞ր նախադասության մեջ ներգործող խնդիր կա:

- 1) Ի՞նչ է պահանջվում գյուղի ղեկավարությունից, պահանջվում է, որ թույլ տան ձի պահել:
- 2) Լեռներ, ներշնչված դարձյալ ձեզանով,
Թնդում է հոգիս՝ աշխույժով լցված:
- 3) Թագավորի հրամանով նրան դատապարտեցին մահվան:
- 4) Ու ձորի գլխին մոլորված կանգնած՝
Նայում է ներքև՝ սիրտը սևակնած...

61

Ո՞ր նախադասության մեջ բուժ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Թե ուր էին կորել թերահավատ նախապաշարումներս ու խոհերս որոնք անընդհատ ճնշում էին ուղեղս քաղաքի փոշոտ փողոցներում ես չեմ կարող ասել:
- 2) Իմ երագներում հաճախ նա ինձ պատկերանում է որպես վաղեմի մի բարեկամ:
- 3) Չգիտես որ մեղքի համար ապաշխարող բնակիչները կծկվել էին բարձրաբերձ լեռան անմատչելի ծերպերում:
- 4) Այդպիսի փոքրոգիներն ընդհանրապես քիթները դեպի երկինք են ցցում և կարծում այդպես կկարողանան երկինք մտնել:

62

Պնդումներից ո՞րն է ճիշտ:

- 1) Հայ գրականության մեջ քնարական պոեմի դասական օրինակներ են Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» և Հ. Թումանյանի «Անուշ» պոեմները:
- 2) Ե. Չարենցի «Տաղարան» շարքը գրված է Նահապետ Քուչակի հայրենների նմանողությամբ:
- 3) Դանիել Վարուժանի «Հացին երգը» շարքը ներկայացնում է հացի արարման ընթացքը:
- 4) «Անլռելի զանգակատուն»-ը Պ. Սևակի առաջին ստեղծագործությունն է:

63

Երկտող տներից կազմված բանաստեղծությունը, որում տների երկրորդ տողերը հանգավորվում են առաջին տան տողերի հետ, կոչվում է՝

- 1) գազել
- 2) տնետ
- 3) հայրեն
- 4) տրիոլետ

64

Բառերից և բառաձևերից քանիսի՞ր բոլոր վանկերն են փակ.

փշրտել, սայլապան, բանակցել, նրբագեղմ, անպայման, կարկամել, ներամփոփ, ծածկույթ, ծածկոցներ, ընդգծվել, քայլվածք, ամրացնել:

65

Քանի՞ գոյական կա տրված հատվածում:

Նա սովորական հոգևորականներից ավելի ազդեցիկ էր խոսում, և գրուցակիցը ստիպված էր լինում առանց այլևայլության ենթարկվելու նրան: Նա ուներ հուսալի խելամտություն և գիտելիքներ, որոնցով օժտված են միայն իրոք հոգևոր անհատները: Խոստովանում եմ՝ ես շատ բան ունեի սովորելու այդ մարդուց:

66

Տրվածներից քանի՞սն են համապատասխանում Ավ. Իսահակյանի ստեղծագործություններին:

- «Հայրենի հողը» ստեղծագործության մեջ արքայից վիրավորված զորավարի մոտ որոշում են գնալ գուսանն ու ծեր շինականը՝ հայրենի հողով, տավիղով ու երգերով հիշեցնելու նրան իր հայրենիքն ու նախկին փառքը:
- «Հավերժական սերը» ստեղծագործությունն ավարտվում է նրանով, որ Էլ-Սամանի և բամբիշի սիրո պատմությունից արդեն անցել են դարեր, և անապատը ծածկել է ամեն ինչ, նաև Թադմորի ապարանքն ու Էլ-Սամանի անմահ սիրո վկա աշտարակը:
- «Աբու-Լալա Մահարի» պոեմում անապատ հեռացող բանաստեղծը դառը խոսքեր է ասում բոլորի հասցեին՝ բացառություն անելով միայն ազնիվ ու հավատարիմ ընկերոջը:
- «Մեր պատմիչները և մեր գուսանները» բանաստեղծության մեջ հեղինակը վկայում է, որ մեր գուսանները խանդավառ գովերգել են հայ դյուցազունների հաղթանակը՝ ծաղրելով ոսոխների պարտությունն ու տեսնելով մեր շքեղ ապագան:

67

Նշել այն բառերի համարները, որոնք ընդհանուր արմատ ունեն.

1. խաժակ, 2. ակնոց, 3. սևակ, 4. դասակ, 5. բյուրակն:

68

Նշել այն պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների համարները, որոնք սխալ են փոխակերպված բարդի:

1. *Մեր ճարտարապետական վաղեմի կոթողները չտեսածը թող չխոսի հայրենիքից:*
Նա, եթե չի տեսել մեր ճարտարապետական վաղեմի կոթողները, թող չխոսի հայրենիքից:
2. *Հասմիկը շատ էր անհանգստանում որդու՝ գիշերը ուշ տուն գալուց:*
Հասմիկը շատ էր անհանգստանում որդու համար, քանի որ գիշերը ուշ էր տուն գալիս:
3. *Ո՞վ կհերքի վշտի՝ մարդուն դժբախտացնելը:*
Ո՞վ կհերքի, որ վիշտն է մարդուն դժբախտացնում:
4. *Զգաց իր՝ այլևս այդ անտանելի ճնշմանը չդիմանալը:*
Զգաց, որ ինքն այլևս չի դիմանում այդ անտանելի ճնշմանը:

Դասավորել համարները այն հերթականությամբ, որը համապատասխանում է պարբերությունների տրամաբանական հաջորդականությանը:

1. Պիզայում հիացնունք պարզևող, առինքնող ու իրենց չնաշխարհիկ գեղեցկությամբ հոգիդ թրթռացնող տեսարժան վայրեր շատ կան, որոնցից ամեն մեկը գրավիչ է յուրովի, բայց նրանց մեջ ակնբախ լուսապսակ է թեք աշտարակը:
2. Հազար ինը հարյուր վաթսունչորս թվականի երկրաշարժից հետո թեքությունն ավելի մեծացավ, և Իտալիայի կառավարությունը հապշտապ դիմեց աշխարհի բոլոր մասնագետներին՝ մասնակցելու աշտարակի փրկության գործին:
3. Պիզա քաղաքը իր միջնադարյան ճարտարապետական նախազարդ կոթողներով, սալահատակ հարթ փողոցներով ու անբասիր մաքրությամբ, ինչպես նաև անդորրությամբ մի առանձին գրավչություն ունի զբոսաշրջիկների համար:
4. Վեհապանծ կոթողի բարձրությունը հասնում է հիսունչորսուկես մետրի, իսկ սանդուղքների թիվը երկու հարյուր ինսունչորս է: Աշտարակի առեղի ծանրությունը տասնչորս հազար հինգ հարյուր տոննա է, և մարմարիոնն այդ հսկա զանգվածը թեքված է չորս մետր երեսունվեց սանտիմետր:

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր *ճիշտ է*, *Միսալ է*, *Չգիտեմ* տարբերակներից որևէ մեկը:

1. *Ոջ* հոլովման ենթարկվող բառերը գրական հայերենում ներգոյական հոլովաձև չունեն:
2. *Ան* հոլովման ենթարկվում են գրաբարյան *ն* վերջնահնչյուն ունեցող բառերը, *ում* վերջածանց ունեցող բառերը, ինչպես նաև *անուն* բառը:
3. Տարվա եղանակների բոլոր անունները պատկանում են *և՛ ան*, *և՛ վա* հոլովումների:
4. *Ություն* ածանց ունեցող հասարակ գոյականները ենթարկվում են *ա* ներքին հոլովման:
5. *Ու* հոլովման ենթարկվող բառերում *ու* վերջավորությունը դրվում է բառավերջի *ի*-ի փոխարեն կամ ավելանում է բառի վերջում:
6. *Անք*, *ենք*, *ոնք* ածանցներով կազմված բոլոր գոյականները պատկանում են *ց* հոլովման: